

Մեղք եմ գործեր անգրդջայ,
Բանտէնէն խապար կու տայ,
Մեղաւորաց վայ կու տայ. Աստ...

Մեղք եմ գործեր դիժար ես,
Իմ Տէր՝ մեղայ կ'ասեմ քեզ,
Մեղաւոր եմ սեւերես. Աստ...

Մեղօք զհոգիս կու տանջես,
Մեղաւորիս չի լրես,
Յոյս 'ւ ապաւնչս զու ես. Աստ...

Խոստովանիմ քահանին,
Հաւատամ զՀայր և զՍրբին,
Պաշտեմ սուրբ զԵրրորդութիւն. Աստ...

Ես մեղաց զաւակ էի,
Մեղօք զհոգիս կորուսի,
Հասաւ օրս վախճանի. Աստ...

Այս ինչ բան է որ արի,
Ողորմութիւն այլ չարի,
Զաղքատն ի տուն չի թողի. Աստ...

Թաթոսըն լայ ողբալի
Վերայ մեղացն որ ունի,
Տէրն ողորմած ամենի՝
Ի բազմամեղս զթափացի:
Հրատ. Հ. Մ. ՊՈՏՈՒՐԵԱՆ

ՀԱՅԵՐԸ ԲԱՐԻԶԻ ՄԷՋ

«Ամէն մարդ երկու հայրենիք ունի,
Իրենք և յետոյ Գաղիան»:

Գաղիա՝ այն գեղեցիկ երկիրը, որուն
կը ձգտին քաղաքակիրթ ժողովուրդներու
առաւելագոյն սիրոյն ամէն զգացումները,
մանաւանդ Բարիզ, յաւերժաբար զարմա-
նասցանչ է, և պիտի մնայ միշտ ամբողջ
երկրագունտիս հրապուրելին. Մարտէյլի և
Մոնթէլիէյի նման Հայկական բազմաթիւ
զապուկ մը պահած է միշտ:

Եւ իրօք Բիթիւիէի (Loiret) եկեղեց-
ւոյն պաշտպան սուրբերէն մին է Ս. Գրի-

գոր Նիկոպոլսեցի (Հայաստան), ծնած յի
դարուն այդ քաղաքին մէջ. որ թողուց հայ-
րենիքը, կտրեց խաւիւսն, թափառեցաւ
կեղտաց մէջ, և Հայաստանէն հեռն ա-
ռած երկու ընկերները ճանապարհին մէջ
կորսնցնելէն վերջ՝ հաստատուեցաւ ի Բի-
թիւիէ՝:

Բազմաթիւ Հայեր Գաղիա եկան նաև
յետ Լևոն Զի (կամ Ե) Հայոց վերջին
թագաւորին, որ գահազուրկ՝ եկաւ կնքել
իւր օրերը Բարիզի մէջ ի 29 Նոյեմբեր
1893:

Հայոց պատմութիւնը կը յիշատակէ
քանի մը Հայերու անցքը ի Գաղիա ժի-
դարու մօտերը, Կ'երևայ այդ թուականին
պիտի ըլլայ այն Հայաստան արհաւիրու-
րիւնը Պոպօի Մայր եկեղեցւոյն ձախ բռն
սեան մը վրայ՝: Յետ քնութեանց՝ ձեռնհաս
գիտնականները հաստատեցին՝ որ այդ ար-
ձանագրութիւնը Սարգիս անուամբ Հայու
մ'էր, այդ քաղաքին մէջ հաստատուած
կամ անցորդ, և տեղւոյն կղերին մեծ պար-
զե մ'ըրած ըլլալուն համար, պահանջած
էր իրբև փոխարէն՝ որ իւր յիշատակը
պահուէր կաթողիկէին սեան մը վրայ փո-
րագրուած:

Լազրասի (Լանկրտոք) արքայանոցն
բերուած լատին ձեռագիր մը՝ ունի հա-
յերէն ծանօթութիւն մը՝ զբուած Սերաս-
տիոյ Սիմէոն եպիսկոպոսէն, որ Զատիկը
կատարած էր Լազրասի եկեղեցւոյն մէջ
1388ին՝:

Պատմիչը կ'աւանդէ՝ թէ Ռիշչլիէս կըը-
ցածն ըրաւ՝ որ Արևելքի մէջ զաղիական
ազդեցութիւնը զօրացնէ. մղուքն տուաւ
Գաղիոյ մէջ արևելեան ուսմանց. նոյն իսկ
մտածեց Արևելքէն ձեռագիրներ բերել տալ՝
իւր զբաղարանը զարդարելու համար, և
օգտակար ըլլալ գիտնականներու որ պիտի

1. Fr. Macler, mosaïque orientale.

2. Compte rendu de la séance du 25 janvier 1872 du Comité local d'histoire et d'archéologie par Mgr. de la Tour d'Auvergne Lau-raguais.

3. Léopold Delisle, Le Cabinet des Manus-crits.

ուսումնասիրելին զանոնք¹, Ռիշլիէօի գեւ-
րագանցօրէն գործնական տաղանդը նոյն
խակ գաղափարն ունեցաւ Գաղիոյ մէջ Հայեր
յնակեցեալն² որպէս զի անոր վաճառականու-
րիւնը զարգացեալ³, և այդ առթիւ իւր ծախ-
սովն Բարիզի մէջ տպել տուաւ քանի մը
հայ գրքեր, և յատկապէս Հայր Ռիշլիայի
Հայ-Լատին քաղցիրը⁴ որ ձրի բաշխուե-
ցաւ⁵:

Պետական այս մեծ մարդէն վերջ՝ և
կաւ Լուի ԺԴ մեծ թագաւորը, որ շատ
հոգածու Արեւելքին իրերուն, շարունակել
տուաւ Ռիշլիէօյի և Մազարէնի հետեւած
արեւելեան քաղաքագիտութիւնը, նպաս-
տելով նաեւ Մարսէլի մէջ հայկական տը-
պարանի մը հաստատութեան:

Այս թուականիս Ոսկան վարդապետ
երևանեցի՝ որ արդէն Ամստերդամի մէջ
հայ տպարան մը հիմնել էր, Հայոց կա-
թողիկոսէն ի Գաղիա զրկուելով՝ ընդու-
նեցաւ նաեւ Լուի ԺԴին Մարսէլի մէջ
հայկական տպարան մը կանգնելու հրա-
մանը:

Այն թանկագին համակրութիւնը՝ զոր
Ռիշլիէօ և Լուի ԺԴ տածեցին հանդէպ
Հայոց, և յաջողութեամբ շարունակեցին
Լուի ԺԴ և ԺՋ⁶, պսակուեցաւ 1811ին՝
Նաբոլէօն Աի կայսրութեան օրով՝ Բարիզի
Արեւելեան լեզուաց դպրոցին մէջ Հայե-
րենի աթոռի մը հաստատուելովն, որուն
առաջին ուսուցիչն եղաւ հայազգին Շա-
հան Զրպետ⁷:

Ուրեմն մասնաւորապէս Բարիզի մէջ
էր՝ որ Հայերը կարեւոր միջավայր մը ձե-
ւացուցին:

Երեք նշանաւոր հայեր կան հոն մեռած
և թաղուած: Առաջինն է Լևոն Զ Լուսի-
նեան, Հայոց վերջին թագաւորը⁸, որ գա-
հընկէց գերի տարուեցաւ Եգիպտոս, և

կաստիլիոյ Յովհաննէս Ա թագաւորին միջ-
նորդութեամբ շուտով Բարիզ գալով՝ Գա-
ղիոյ կարողութեամբ թագաւորն իրեն ամե-
նահանդիսաւոր ընդունելութիւն մ'ըրաւ,
յետոյ լիացուց զինքը շնորհներով, և
իրեն յանձնեց նոյն իսկ դեսպանութիւն
մը Անգլիոյ Ռիքարտոս Բ թագաւորին:

Լևոն Ե մեռաւ Բարիզի թէրոնէլ ապա-
րանքին մէջ՝ ի 29 յոյնմբեր 1893, և թա-
ղուեցաւ Ս. Դիոնիսիայ մայր եկեղեցւոյն
մէջ, այդ արքայական դամբարանին իշ-
խաններու կարգը⁹:

Երկրորդը՝ հայ Պատրիարք մ'է: Եւ
երօք 1702ին Աւետիք վարդապետ Կ.
Պոլսոյ պատրիարք անուանուեցաւ: Յի-
սուսեանց դէմ ունեցած հակառակութեան-
ցը համար բազմաթիւ թշնամիներ ունեցաւ,
որոնց մէջ Կ. Պոլսոյ գաղիական դեսպան
Ֆէրիօլ իւր ամենէն բուռն հակառակոր-
դը. յետոյն թախանձանքներէն՝ բար-
ձրագոյն Դուռը շատ անգամ հրաժարե-
ցուց, բանտարկեց և աքսորեց: Աւետիքը
Երրորդ աքսորանաց ատեն դէպ ի Ե-
րուսաղէմ 1706 Ապրիլ 20ին՝ նաւը Գիո-
սի ափանց վրայ խարխիւ ձգեց, և հոն
— ազգաց իրաւանց դէմ — Ֆէրիօլի հրա-
մաններուն վրայ Աւետիք բռնուեցաւ կըզ-
զւոյն գաղիական փոխ հրապատէն, և ա-
մենախիստ հսկողութեամբ Մարսէլի դըր-
կուեցաւ, և հոն Նաւարանի բանտը ձգուե-
ցաւ:

Երբ գերութեան լուրը Կ. Պոլիս հա-
սաւ, Հայերն աղբիւսագիր մը տուին Սուլ-
թանին իրենց պատրիարքին համար. բայց
Լուի ԺԴ տեղեկանալով թէ ինչ կ'անցնէր
Կ. Պոլսոյ մէջ, իսկոյն հրամայեց որ զայն
Գաղիոյ հիւսիսակողմը Ս. Միքայէլ երան
վանքը փոխադրեն. սակայն այս առանձ-
նոցն ալ շատ չէր ապահովեր թագաւորը:

1. Henri Omont. Missions archéologiques
françaises en Orient, ևն:

2. Père B. Boucher. consulat de la Mer, ևն:

3. Bellaud, essai sur la langue armén.

4. H. Omont.

5. Bellaud, documents relatifs à la consti-
tution et à l'histoire de l'Ecole spéciale des

langues orientales vivantes, և A. Carrière,
notice historique sur l'Ecole spéciale, ևն:

6. Ըստ հնախօսից՝ Լիսինեանց ընտանիքը կը
ծագի Բուսուրդէն:

7. Լևոն Եի կիսաբանը տեւ վերսայլի թա-
գարանին մէջ:

ուստի երեք տարի բանտարկութենէ վերջ 1809 Դեկտեմբեր 18ին Պատգիլ փոխադրեց երեւելի կալանաւորը:

Աւետիք իւր բանտէն ելլելու համար ստիպուեցաւ դաւանափոխ ըլլալ և Սէն Սիւրբիսի քահանայից մէջ ընդունուեցաւ: Հոն մեռաւ տարի մը վերջ համբաւաւոր ծերունին՝ 1711 Յուլիս 21ին, և Սէն Սիւրբիսի դասին մէջ թաղուեցաւ:

Երրորդ Հայը որ կը հանգչի Գաղիոյ հողին վրայ, է (յոսան էֆէնտի, օսմաւ նեան պետութեան հին քարտուղար մը, զլիաւոր թեկնածու Սահմանադրութեան, և անոր հօր՝ նշանաւոր Միտհատ փաշայի անմիջական աշխատակիցը. անցեալ դարու վերջերը մեռած և թաղուած Բաբիգի Բէր Լաշէզ գերեզմանոցին մէջ:

Եթէ ժամանակագրութեան կարգին հետեւինք, կը տեսնենք որ Լուի Ֆիլիպի և Նաբուլէոն Գի օրով Հայերը երկու դարուցական մեծ հաստատութիւններ ունէին Բարիգի մէջ, մին Մուրատեան դարոցը (Monsieur le Prince պողոտային մէջ) և միւսը « Հայկազնեան վարժարանը »: Այդ թուականին Հայերն Արամեան առուամբ տպարան մ'ալ ունէին նոյնպէս Բարիգի մէջ:

Ճիշդ է որ քանի մը եօթանասնակ տարիներէ ի վեր Հայերը միշտ Բարիգ փութացած են՝ քաղելու գիտութեան և քաղաքակրթութեան բարիքները:

Սակայն տկար գաղթականութիւն մը սկսաւ Ապտիւլ Համիտի բռնակալ կառավարութեան սկիզբէն, որուն ժամանակ իրենց դէմ կանոնաւորապէս կազմակերպուած հալածանքներու մատնուած, ամէն ոք կը մտածէր իւր յարկը թողուլ և օտարութեան մէջ ապստամբ փնտռել: Այս առթիւ Բարիգ և արուարձանները բնակող Հայոց թիւը մօտաւորապէս 1500ի կը հասնի:

Բաց ի վաթսուհի չափ ուսանողներէ՝

Հայ ազգը Բարիգի մէջ ունի մարդկային գործունէութեան ամէն ճիւղի մէջ իւր ներկայացուցիչները. այսպէս վաճառականներու քով պիտի տեսնենք նշանաւոր բժիշկաներ (որոնց մէջ համալսարանի օգնական մը, անդամագին մը, և Բասսէօրի հաստատութեան անդամ մը), առաջին կարգի դեղագործներ. կան նաև նկարիչներ, շատ գնահատուած և ծանօթ արուեստագէտներ, միջնորդներ, սեղանաւորներ, յանձնակատարներ և ակնագործներ:

Գուցէ աւելորդ է յիշեցնել այն մեծ դիրքը՝ զոր կը զբաւեն ադամանդագործներու և արուեստական իրացուհիներու վաճառանոցներու մէջ: Կան նաև դերձակներ, ոսկերիչներ, շատ գնահատուած մեքենագործներ, երկրաչափներ, լուսանկարիչներ, ատամնարուժեր, փորագրողներ, ներկարարներ, տպագրողներ, ամէնքն ալ իրենց արուեստին բարձրութեան մէջ: Փաստաբաններ, որոնց մէջ օսմանեան փաստաբան մը՝ հմուտ օսմանեան և գաղիական իրաւանց, որ թուրքիոյ Դեսպանատան և Հիւպատոսարանի մէջ միանգամայն օրէնսգէտ խորհրդականի պաշտօնը կը կատարէ:

Կան նաև խմբագրապետներ, թարգմանիչներ, զրազէտներ, ինչպէս նաև ելեմտագէտներ, սակարանաւորք, ապահովագրութեան պաշտօնեաներ, և այլն:

1892ին Հայերը Բարիգի մէջ հիմնեցին Հայկական բարեգործական ընկերութիւնը, իրենց կարօտեալ և աղքատ հայրենակիցներու օգնութեան հասնելու նպատակով. և որ դժբաղդաբար այլ և այլ պատճառներով այժմ գրեթէ քայքայուած է:

Ուրիշ ընկերութիւն մը՝ «Բարիգի Հայոց միութիւնը», քանի մը քառակ տարի առաջ հիմնուած՝ ընդարձակ նպատակով և մեծ փափաքներով, որ այսօր գրեթէ անգործութեան դատապարտուած է:

Մի և նոյն ժամանակներն Հայերը «Մա-

1. Procès verbal de M. Dargenson, contenant enquête sur la vie et la mort de M.

Avédik, patriarche des Arméniens de Constantinople.

սիսեան Ակումբն» հաստատեցին, որ սակաւկեաց տեղողութիւն մ'ունեցաւ,

Իբրեւ ընկերութիւն՝ ամենէն գործունեայ դերը կը խաղայ Բարիգի Հայ աշխատաւորներու միութիւնը, հիմնուած 1904ին՝ փոխադարձ օգնութեան ծրագրով մը. իւր Աթոռն է Գոնտորսէ փողոցին մէջ, թիւ 13. Համեստ արուեստագետներէ և գործաւորներէ կազմուած, իւր կանոնագրին զածած շաւղին մէջ կը գործէ, կրցածին չափ օգտակար հանդիսանալով անդամակիցներուն:

Ըսենք նաև՝ որ Հայ Սեանողներն ալ իրենց միութիւնն ունին: Առութեամբ կ'անցնինք այն քանի մը ընկերութեանց մասին՝ որ վերջին երեսուն տարիներուն մէջ կազմակերպուեցան, և որոնցմէ միայն հետքեր կ'երևին:

Հայ ազգը, այնքան օծուած և մէտ քաղաքակրթութեան և յատկապէս իր զաղաքակրթութեան, երբէք չէ հեռացած իւր եկեղեցիէն, մանաւանդ իւր քաղաքական անկախութիւնը կորսնցնելէ վերջ. վասն զի եկեղեցին իրենց համար փրկութեան խարխալ մ'եղաւ և պահպան մը ցեղին և լեզուին:

Պէտք է սակայն գիտնալ՝ թէ մոլեռանդութեամբ չէ որ Հայը կապուած է իւր եկեղեցւոյն, այլ որովհետեւ նա իրեն համար միութեան կեդրոն մ'է: Եւ ուր որ Հայերու համախմբութիւն մը կայ, հոն պիտի կանգնի անվրէպ եկեղեցի մը:

Բարիգի Հայոց եկեղեցին (15, փողոց Ժան-Կոստն), անկախ իւր կրօնական և բարոյական կարևորութենէն, հայկական ճարտարապետութեան և արուեստի տեսակետով ամենէն գեղեցիկ շէնքերէն մին է: Հայերը կը պարտին զայն իրենց հայրենակցին, Աղեքսանդր Մանթաշովի առաւորած թարեպաշտութեան, որուն համար նա գրեթէ մէկ միլիոն ֆրանք ծախսած է:

*
* *

1759ին՝ Յովհաննէս Աթլըն անուամբ Հայ մը Մարսէյլ ցամաք կ'ելնէր: Կը

վերաբերէր Պարսկաստանի մէջ նշանաւոր ընտանեաց մը, ուր երբայրը կառավարչի կարևոր պաշտօն մը կը վարէր: Սակայն ծնողքն ու ազգականները սպանուեցան պետական հարուածի մը ժամանակ՝ զոր յափշտակէլ մը կը փորձէր: Յովհաննէս Աթլըն միայն ողջ մնալով իւր ընտանեաց մէջ, ծախուեցաւ իբրեւ գերի, և տասնևհինգ երկար տարիներ այդ գոյութեան ամէն արհաւիրքները կրեց: Սակայն չընկճուեցաւ ծախողութիւններէն, այլ անզուապ գորութեամբ մը և բարձր ուշիմութեամբ մը որ յատուկ է հայ ցեղին, իւր երկար մարտիրոսութեան ժամանակ ինքզինքը նոսրեց բամբակի շահագործութեան և տորոնի մշակութեան: Այս նպատակաւ ուսումնասիրեց մշակութեան բոլոր կատարելագործութիւնները, և երբ զանոնք գործադրելու վրայ էր, հնարքով մը կրցաւ փախչիլ: Եւ այս անակնկալ յուզիչ փոփոխութենէն վերջ էր՝ որ Մարսիլիա գրաւուողը: Շուտով ընդունուեցաւ Լուի Ժիւլէն Վերսայլի պալատին մէջ:

Թագաւորը՝ որուն ներկայացուեցաւ Աթլըն իբրեւ նշանաւոր երկրագործ մը, յանձնեց իրեն որ Գաղիոյ մէջ մտցնէ շերտաբոսութեան և շերտագործութեան նոր դրոշմներ: Սակայն այն ատենուան Բարիգի մէջ Աթլըն իրեն հակառակորդ ունեցաւ այն ամէնքը՝ որոնց իւր գիտերը և գիտութիւնը կը թուէին ֆուսել, կամ պարզապէս երկարայել կու տային. և արքունեաց սարգանքներու հետևանքով երեսն ձգուեցաւ նոյն իսկ Թագաւորէն:

Մեր երեւի հայրենակիցը լքեալ՝ քաշուեցաւ Ալիսիոնի կոմսութեան մէջ, և հոն անդու անհանգիստ նուիրեց ինքզինքը արեւելեան րոյսերու մշակութեան, մասնաւորապէս տորոնի: Իւր ձեռնարկութիւնները յաջողութեամբ պատկուեցան, և այնուհետեւ տորոնը հարաւային Գաղիոյ ամենէն նշանաւոր բերքերէն մին եղաւ: Դժբաղդաբար Աթլըն մեծ օգուտ մը չբաղեց անկից: Վասն զի մեռաւ 1774 Նոյեմբեր 15ին ի Գոմին՝ յետին չքաւորութեան մէջ:

Թէպէտեւ մեռաւ անծանօթ եւ խեղճու-
թեան մէջ, իւր փառքը մնաց. եւ իւր գիւ-
տերուն երախտագէտ Գաղիան մեծ յար-
գանք մ'ըրբաւ իրեն, կանգնելով հռովմու
եւ գիտնական Հայուն, որ սրտով գաղիացի
եղած էր, գեղեցիկ արձան մը Աւինիոնի
հրապարակներէն միոյն մէջ:

1901 Նոյեմբեր 19ին Հայոց ընտրեալ
խումբ մը՝ Ասլանկիւ բժշկին առաջնոր-
դութեամբ մեծ ցոյց մ'ըրաւ, երթալով եւ
պսակ մը զետեղելով անմահ Յովնան-
նէս Ալթընի արձանին պատուանդանին
վրայ:

Մեր յօդուածը վերջացնելէ առաջ ա-
ւելցնենք, որ ներկայիս Հայերը Բարիզի
մէջ չորս պարբերական հրատարակութիւն-
ներ ունին:

Առաջինը Անահիտ, գրական եւ գեղեց-
կագիտական, որ լոյս կը տեսնէ հայերէն

լեզուով՝ Արշակ Չոպանեան վայելչարան
գրչին տեսչութեան տակ:

Երկրորդը Բանասէր, բանասիրական եւ
հնախօսական, զոր կը հրատարակէ Կ.
Բասմաջեան՝ գիտուն հնախօս ու պատ-
մարանը, անդամ Ասիական ընկերութեան:
Երրորդն է առողջարանական հանդէս
մը, գաղերէն լեզուով «Le Premier Pas»
(Առաջին քայլ), որ կը հրատարակուի Թո-
քախտի մեծայարգ մասնագէտ Ասլանկիւ
բժշկին տեսչութեան տակ:

Վերջապէս չորրորդն՝ «Ասպարէզ» հան-
դէս քաղաքական, վաճառական եւ կլիմատա-
կան, որ կը տպուի գաղերէն, հայերէն եւ
թուրք լեզուներով, Մ. Գումրուեանց՝ ե-
րիտասարդ եւ աշխոյժ հայուն տեսչութեան
ներքէ:

ԱՐՄԱՐՈՒ ՌԵՃԱՆԱՆ

Թարգմ. Գաղերէնէ Յ. Ա. Լ.



ԼԱՅՈՂ ՍԻՐՏՍ

Վ. Ազնուորի յիշատակին

Աստղոտ երկնի տակ լրճակն է ծիծղուն
Չերդ միապաղաղ պայծառ հայելի.
Գեղջկական մի երգ լըսուում է հեռուն,
Ոսկեգոյն ծովակ — մէջը դաշտերի:

Լուսնակի բլուրեղ արցունքն է կաթում
Լրճակի կըրծքին մակոյկի վըրայ.
Մակոյկում փայլեց մի լոյս շողջողուն,
Այնտեղ նայեցին աստղեր մարգարտեայ:

Պատուհանին մէջ մեխակ է բացուել,
Շարժուում է մեղմիկ լուսնակի զըրկում.
Իմ փոքր սննեակի լոյսն հոգեվարք էր...
Լուսնակի արծաթ աղբիւրն է ցայտում:

Լուսնակ, նայիր ինձ, վըրկայ եղիր դուն
Իմ աչքից հոսած բիւր արցունքներին.

Իմ սիրտը ո՞ր է ուրախ, զըւարթուն...
Էլ մոռացել եմ երգերս խնդագին:

Լրճակն է անշարժ, մի երգ հովիւի
Աստղոտ երկնի տակ մարուում մեղմօրէն.
Գինով է հոգիս, ո՛չ թէ գիշերի
Հեշտութիւնից՝ այլ իմ խոր վըշտեքն:

Մեխակը ո՞վ է արցունքով թըրջում...
Լուսին, վըրկայ ես... Օ՛րոյր, քեզ համար,
Քերթով վիկտորիա, երկար, անդադրում
Թափեցի արցունքս իմ աչքից վար:

Ամէն բան զըւարթ այս գիշերին մէջ,
Սիւքեր գինովցած անոյշ բուրմունքով-
Ես էլ գինովցած սուգերով անշէջ, —
Լացո՛ղ քեզ համար պատուհանիս քով...:

ԱՄՍԷՆ ԵՐԿԱԹ